

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆիզիկական անձանց Սոցիալական ապահովության հաշվի

Հրապարակվել է 01.10.2025թ.

1. Սոցիալական ապահովության հաշվի բացման, սպասարկման և գործառնությունների իրականացման սակագներ

N	Ծառայություն	Սակագին (ՀՀ դրամ)
1.	Հաշվի բացում	
	ռեպլիկենտ	Անվճար
2.	Արժույթ	
	AMD	
3.	Տարեկան սպասարկում	Անվճար
4.	Նվազագույն մնացորդ	Նախատեսված չէ
5.	Հաշվի փակում	Անվճար
6.	Կանխիկ միջոցների մուտքագրում հաշվին	Նախատեսված չէ
7.	Միջոցների կանխիկացում	Անվճար
8.	Փոխանցումներ բանկային հաշվից	Համաձայն Բանկում գործող սակագների
9.	Տեղեկատվական ծառայություններ ¹	
	Հաճախորդի կողմից նախընտրված եղանակով պարտադիր քաղվածքի տրամադրում առաջին անգամ ցանկացած ժամանակահատվածի համար	Անվճար
	Հաճախորդի պահանջով մեկ անգամից ավել քաղվածքի տրամադրում մասնաճյուղում	
	մինչև 1 տարի վաղեմության	1.900
	1 տարուց ավել վաղեմության	3.900
10.	Վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի պատճենների տրամադրում ²	Համաձայն Բանկում գործող սակագների
11.	Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով (Ներառյալ ԱԱՀ)	
	հայերեն լեզվով	2.900
	ռուսերեն և անգլերեն լեզուներով	3.900
	Տեղեկանքների տրամադրում Բանկի ոչ ստանդարտ ձևով ²	5.900
12.	Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույք	0.01%

¹ Բանկի պաշտոնական կայքի միջոցով առցանց տեղեկանքների կամ քաղվածքների պատմիրման դեպքում նշված սակագներից նվազեցվում է 900 ՀՀ դրամի չափով:

² Մատուցված յուրաքանչյուր պրոդուկտի տեսակի շրջանակում:

2. Սոցիալական ապահովության հաշվի նկարագրություն, էական դրույթներ

2.1. Սոցիալական ապահովության հաշվի բացվում է ՀՀ ռեպլիկենտ ֆիզիկական անձանց համար ՀՀ դրամ արժույթով:

2.2. Սոցիալական ապահովության հաշիվը բացվում է Հաճախորդի անվամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Լիալոր մարմին) կողմից տրամադրված Հաճախորդի տվյալների հիման վրա (Անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տեսակ, սերիա և համար, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար) կամ Հաճախորդի ցանկությամբ անձամբ Բանկ ներկայանալով:

2.3. Սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվում են ՀՀ օրենքով սահմանված պարբերական բնույթ կրող դրամական վճարների գումարները (ներառյալ կենսաթոշակներ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարներ և այլ օրենքով սահմանված գումարներ):

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք www.vtb.am հասցեով:

2.4. Հաճախորդը հաշվետիրոջ իրավունքներ է ձեռքբերում և կարող է տնօրինել Սոցիալական ապահովության հաշվին փոխանցված գումարները «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից պատշաճ նույնականացվելու և Բանկի հետ Սոցիալական ապահովության հաշվի բացման պայմանագիր կնքելու օրվանից անորոշ ժամկետով:

2.5. Հաճախորդին վճարվող ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարբերական դրամական վճարների գումարները Բանկը մուտքագրում է Հաճախորդի անվամբ Բանկում գործող միևնույն Սոցիալական ապահովության հաշվին:

2.6. Սոցիալական ապահովության հաշվին կից Բանկը տրամադրում է MIR դեբետային վճարային քարտ (այսուհետ՝ Քարտ):

2.7. **Սոցիալական ապահովության հաշվով կենսաթոշակ ստացող հաճախորդը (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը կամ խնամակալը) տարեկան մեկ անգամ ոչ ուշ, քան վերջին անգամ Բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, անձամբ Բանկ ներկայանալու միջոցով Բանկին հավաստում է Հայաստանի Հանրապետությունում լինելը: Ընդ որում Կենսաթոշակառուի կողմից հայտարարություն տալ է համարվում Բանկում անձամբ տվյալ հաշվով որևէ գործարքի կատարումը կամ քարտի սպասարկման (ներառյալ վերաթողարկում) հետ կապված որևէ փաստաթղթի ստորագրումը:**

2.8. **Սոցիալական ապահովության հաշվով կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը կամ խնամակալը), կենսաթոշակի վճարումը շարունակելու համար՝ տարին մեկ անգամ ՀՀ-ում լինելը Բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի Բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով կամ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից՝ անձամբ կենսաթոշակառուի ներկայացրած՝ կենսաթոշակին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա:**

2.9. Սոցիալական ապահովության հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- ՀՀ օրենքով սահմանված պարբերական բնույթ կրող դրամական վճարների գումարների մուտքագրում և ելքագրում,
- փոխանցումներ Բանկի հաշիվների միջև,
- փոխանցումներ ՀՀ տարածքում,
- վարկերի մարման հետ կապված գործառնություններ,
- տեղեկատվական ծառայություններ (քաղվածքներ, տեղեկանքներ),
- այլ գործառնություններ:

2.10. Սոցիալական ապահովության հաշվի Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, առաջնահերթ անվիճելի անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ արտարժույթային այլ հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում հրապարկված փոխարժեքով:

2.11. Հաճախորդի պահանջով՝ կատարված գործարքների վերաբերյալ հարցման ծառայության վճարը գանձվում է Բանկի Սակագներում այդ նպատակով սահմանված միջնորդավճարների համաձայն:

2.12. Բանկը առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորություններ՝ Mobile/ Internet banking, Հեռախոս Բանկ: Հեռահար սպասարկման պայմաններն ու կարգը՝ <https://www.vtb.am/am/online-banking#all>:

2.13. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

2.14. Սոցիալական ապահովության հաշվի գծով պայմանագրի պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման դադարեցման վրա որևէ ապդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը Նոր պայմանների վերաբերյալ տեղեկացնում է Հաճախորդին վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

2.15. **Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ՝ ընտրելով Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Ձեր նախընտրած եղանակը: Այդուհանդերձ, հայտնում ենք, որ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, վերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիության բարձր մակարդակ:**

3. Սոցիալական ապահովության հաշվի դիմաց տոկոսների վճարման կարգը՝

3.1. Սոցիալական ապահովության հաշվի դիմաց տոկոսները վճարվում են ՀՀ դրամով:

3.2. Սոցիալական ապահովության հաշվին առկա գումարների վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն վերադարձնելու կամ հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

3.3. Սոցիալական ապահովության հաշվին հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 0,01%, որի փոփոխման վերաբերյալ Բանկը Հաճախորդին տեղեկացնում է վերջինիս կողմից Պայմանագրով նախընտրած ծանուցման եղանակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ: Բանկի կողմից Սոցիալական ապահովության հաշվի համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների Նոր չափը կիրառվում է մինչև Հաճախորդին տոկոսները նվազեցնելու մասին տեղեկացումը՝ համապատասխան հաղորդման օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

3.4. Սոցիալական ապահովության հաշվի տոկոսները յուրաքանչյուր ամիս կապիտալացվում են և հաշվեգրվում են հաշվի մնացորդին:

3.5. **Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի համաձայն՝ Սոցիալական ապահովության հաշվին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես Հաճախորդի հարկային գործակալ, գանձում է եկամտահարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:**

3.6. Սոցիալական ապահովության հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ ցույց է տալիս, թե որքան կկապվի հաշվի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից հաշվի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

Սոցիալական հաշվի տարեկան պարզ(անվանական) տոկոսադրույքի չափ՝ տարեկան 0.01%:

Տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

$(100\,000 \text{ ՀՀ դրամ}) * 0.01\% = 10 \text{ ՀՀ դրամ } 365 \text{ օրվա համար:}$

3.7. **Տարեկան (անվանական) պարզ տոկոսադրույք տարեկան կտրվածքով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա Բանկը հաշվարկում է հաճախորդին վճարման ենթակա տոկոսագումարները:**

Սոցիալական հաշվի տարեկան պարզ(անվանական) տոկոսադրույքի չափ՝ տարեկան 0.01%:

Տարեկան (անվանական) պարզ տոկոսադրույք վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

$(100\,000 \text{ ՀՀ դրամ}) * 0.01\% = 10 \text{ ՀՀ դրամ } 365 \text{ օրվա համար:}$

4. Սոցիալական ապահովության հաշվի վարման կարգ

4.1. Սոցիալական ապահովության հաշվին դրամական միջոցների մուտքագրումը և ելքագրումն իրականացվում է մեկ բանկային օրվա ընթացքում:

4.2. Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ):

4.3. Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա գումարները բավարար չեն վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, հայտը վերադարձվում է Հաճախորդին առանց կատարման, ընդ որում, Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կարգադրությունը չկատարելու հետևանքով նրա կրած վնասների համար:

4.4. Սոցիալական ապահովության հաշվի նկատմամբ ժառանգության ձևակերպումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Սոցիալական ապահովության հաշվում առկա միջոցները չեն կարող բռնագանձվել կամ գրավադրվել Բանկի կողմից, եթե անգամ տվյալ հաշիվը Բանկում հանդիսանում է միակ հաշիվը:

4.6. Հաճախորդը Սոցիալական ապահովության հաշվի քաղվածքի ստացման եղանակն ընտրում է հաշվի բացման պահին (էլեկտրոնային փոստով, փոստով, Առցանց հարթակով): Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է 1 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել Բանկային հաշվով քաղվածք 1-ին կետի Սակագների համապատասխան: Բանկը պարտավոր չէ քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկային հաշվով շարժը բացակայում է (հաշիվը չի դեբետավորվել կամ կրեդիտավորվել):

5. Սոցիալական ապահովության հաշվի փակման կարգ

5.1. Հաճախորդը ցանկացած պահի կարող է փակել Սոցիալական ապահովության հաշիվը (լուծել սոցիալական ապահովության հաշվի պայմանագիրը):

5.2. Հաշիվը փակվում է Հաճախորդի կողմից Հաշվի փակման դիմում ներկայացնելու պահին:

5.3. Հաշվին առկա դրամական միջոցների մնացորդը Հաճախորդի հանձնարարությամբ կարող է վճարվել Հաճախորդին կամ փոխանցվել այլ հաշվեհամարի:

5.4. Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի Սոցիալական ապահովության հաշիվը առանց նախնական ծանուցման, եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն իրականացվել որևիցե գործարքներ և կապվում է 0 ՀՀ դրամ:

6. Սոցիալական ապահովության հաշվին կից տրամադրվող վճարային քարտերով գործառնությունների իրականացման հիմնական դրույթներ՝

6.1. Սոցիալական ապահովության հաշվին կից քարտը բացվում է պայմանագրի ստորագրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6.2. Քարտը Հաճախորդին տրամադրելու պահին Քարտի կարգավիճակը ոչ ակտիվ է: Քարտի կարգավիճակն ակտիվացվում է Հաճախորդի կողմից Բանկի ցանկացած բանկոմատով Քարտի ծածկագրի (PIN) կիրառմամբ առաջին իսկ հաջող գործարքի իրականացման միջոցով /այդ թվում նաև «Մնացորդի հարցում» գործարքի միջոցով/:

6.3. Քարտի հետ մեկտեղ, Հաճախորդին է տրամադրվում Քարտի ծածկագիրը (PIN), որը կիրառվում է Հաճախորդի անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: **PIN-ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է միայն Հաճախորդի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ:**

6.4. Քարտի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում.

ա) Քարտը պահպանեք ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը մի պահեք էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:

բ) ծածկագիրը չտրամադրեք երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին: Խնդրում ենք հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:

գ) չպատասխանեք էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել Ձեր ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի հակառակ երեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը):

դ) եթե ինտերնետի միջոցով (այն էջերը, որոնք սպասարկում են MIR դեբետային վճարային քարտ) գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվեք գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև, առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվեք միայն վստահելի կայքերից:

ե) բանկոմատներով գործարքներ իրականացնելիս հետևեք, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմեք Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ձեր ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:

զ) օգտվեք Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Բանկի SMS banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անձնություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ:

6.5. Հաճախորդի Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկը, հաշվի առնելով Հաճախորդի բանկային պատմությունը, իրավունք ունի առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության վերաթողարկել Քարտը, PIN-ծածկագրի պահպանմամբ: Սույն կետի ուժով Քարտի վերաթողարկմամբ Հաճախորդի Պայմանագիրը կհամարվի երկարաձգված՝ Բանկում Քարտի վերաթողարկման պահին գործող սակագներում նշված ժամկետի չափով: Այն դեպքում, եթե Քարտը, որի գործողության ժամկետը ավարտվում է տվյալ ամսվա վերջում, չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված Քարտի վերաթողարկման համար անհրաժեշտ պայմանին/ներին, Բանկն իրավունք ունի Քարտի ժամկետի ավարտման ամսվան նախորդող ամսվա 15-ին ուղարկել SMS – հիշեցում Հաճախորդի կողմից Բանկին հայտնած բջջային հեռախոսահամարին, որի համաձայն Քարտի վերաթողարկման նպատակով Հաճախորդը պետք է համալրի իր քարտային հաշիվը (նվազագույն մնացորդի չափը նշվում է SMS հաղորդագրության մեջ), հակառակ դեպքում՝ Հաճախորդի Քարտը չի վերաթողարկվի: Բանկը չի կրում պատասխանատվություն Հաճախորդի կողմից սխալ նշված հեռախոսահամարի կամ վերջինիս բացակայության համար: Հաճախորդը կարող է հրաժարվել Քարտի վերաթողարկումից՝ Քարտի գործողության ժամկետի ավարտից առնվազն 40 (քառասուն) աշխատանքային օր առաջ՝ Բանկին գրավոր ծանուցելով, այլապես Բանկը կարող է կիրառել վերաթողարկված քարտի դիմաց Սակագներով սահմանված լրացուցիչ վճարներ:

6.6. Քարտի ժամկետի ավարտից հետո ավտոմատ վերաթողարկում չի իրականացվում, եթե Հաճախորդի Բանկ ներկայանալու ամսաթիվը ակտիվ չէ (հաճախորդը վերջին 1 տարում չի ներկայացել Բանկ) կամ ներկայանալու ամսաթիվը ակտիվ է, սակայն վերջին 3 ամսում կենսաթոշակի փոխանցում տեղի չի ունեցել:

7. Քարտի կորստի կամ հափշտակության մասին Հաճախորդը պետք է անհապաղ տեղեկացնի Բանկին հետևյալ եղանակներով.

7.1. Վանգահարելով Բանկի + 37410 560 708 կամ 87-87 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Պայմանագրի մեջ նշված թվային ծածկագիրը: Բանկը կարող է պահանջել Հաճախորդի բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է Հաճախորդի կողմից նշված և Սակագներով սահմանված տարբերակով:

7.2. Բանկի ցանկացած մասնաճյուղ ներկայանալուց և անձը հաստատելուց հետո, Քարտն արգելափակվում է առավելագույնը 30 րոպեի ընթացքում:

7.3. Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում՝ Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այդ մասին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել Բանկի կողմից արգելափակումից հանելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում):

8. Վճարային պլաստիկ քարտերի տրամադրման և օգտագործման կանոններին և պայմաններին կարող եք ծանոթանալ ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ պաշտոնական կայքում www.vtb.am (Քարտեր բաժնում):

8.1. Սոցիալական ապահովության հաշվով տրամադրվող MIR դեբետային վճարային քարտի հիմնական սակագներ՝

	Ծառայության անվանումը / սակագին (ՀՀ դրամ)	MIR դեբետային վճարային քարտ
1	Քարտի թողարկում	Անվճար
2	Հիմնական քարտի տարեկան սպասարկում	Անվճար
3	Չնվազող մնացորդ	0
4	Քարտային հաշվի դրական մնացորդին տարեկան հաշվեգրվող տոկոսադրույք	0,01%
5	Կանխիկ դրամական միջոցների տրամադրում՝	
5.1	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ բանկումատներում	Անվճար
5.2	ՀՀ տարածքից դուրս այլ բանկերի բանկումատներում	1.5% Նվազագույնը 500 ՀՀ դրամ
5.3	Հաշվից կանխիկացում Բանկի դրամարկղերում	Անվճար
6	Նոր քարտի թողարկում PIN ծածկագրի պահպանմամբ (քարտի գործողության ժամկետի ավարտից հետո), Բանկի ավտոմատ վերաթողարկման պայմաններին քարտի համապատասխանության դեպքում	Անվճար
7	Քարտի վերաթողարկում (մաշված/տեխնիկական անսարքություն/PIN ծածկագրի կորուստ/քարտի կորուստ)	Անվճար
8	Նոր PIN կոդի տրամադրում (Նոր քարտ չի վերաթողարկվում)	Անվճար
9	Քարտի գործողության ժամկետ (տարիներով)	5
10	"SMS-բանկինգ" ծառայության ակտիվացում	Անվճար
11	"SMS-բանկինգ" ծառայության ամսական միջնորդավճար (ներառյալ ԱՄՀ)	199 AMD
12	Սոցիալական ապահովության հաշվով քաղվածքների տրամադրում	Համաձայն «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների

9. Այլ լրացուցիչ պայմաններ՝

9.1. Սոցիալական ապահովության հաշվի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններին և կանոններին (ՕՖԵՐՏԱ) կարող եք ծանոթանալ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պաշտոնական կայքում www.vtb.am («Սոցիալական ապահովության հաշիվ» բաժնում):

10. Վեճերի լուծման կարգը՝

10.1 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բոլոր-պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

10.2 **Տեղեկացնում ենք**, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

11. Այլ դրույթներ

11.1. **Հայտարարություն:** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար Վանկահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք www.vtb.am հասցեով:

11.2. **Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

11.3. **Ուշադրություն:** Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

11.4. **Ուշադրություն:** Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

12. Բանկային հաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե Նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք և ՀՀ դրամով* և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով				

* Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև Վանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է www.fininfo.am: